

**ՀԱԼԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ
ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ**
Աղջկանց եւ Մանչերու Դպրոցներ, 1876-1919

ՅԱԿՈԲ ԶՈՒԱՔԵԱՆ

Հալէպի հայ գաղութը կրթական մարզի մէջ դարերու աւանդութիւն ունի: Ս. Աստուածածին եւ առաջնորդանիստ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիներու շրջափակին մէջ ԺԶ-ԺԷ դարերուն գործող Դպրատունը կամ Դասատունը եղած է ոչ միայն սովորական իմաստով միջնադարեան դպրոց մը, այլեւ հայ գրչութեան գաղթավայրի յայտնի կեդրոններէն մէկը, որմէ մեզի հասած են աւելի քան 200 ձեռագիր մատեաններ: Դասատունը հաւանաբար գործած է նաեւ հետագայ դարերուն, սակայն մեծապէս կորսնցուցած ըլլալով իր նախկին փայլքն ու կարեւորութիւնը՝ վերածուած է տէր-թողիկեան տիպի վարժնոցի մը:

1840-ական թուականներէն սկսեալ դպրոցական գործի մէջ խանդավառ միջոցառումներ կը կատարուին: Մինչեւ նոր գաղութի կազմաւորումը (1918 թ.)՝ Հալէպի մէջ կը գործեն տասնեակ մը հայկական վարժարաններ: Անոնց մէջ իր կարեւոր տեղն ունի Ազգային Ներսէսեան Ուսումնարանը՝ իր աղջկանց եւ մանչերու վարժարաններով:

Ազգային Սահմանադրութեան ստեղծած համընդհանուր եռանդուն միջնորդութիւն մէջ, ժամանակի առաջնորդներն ու տեղապահները աւելի ուշադրութիւն կը դարձնեն նախկին Դպրատան տեղը գործող ազգային վարժարանին: Սակայն Ներսէս Վարժապետեանի պատրիարքութեան օրով, եւ անոր ուղղակի յանձնարարութեամբ է միայն որ յաւելեալ բարեփոխութիւններու եւ հոգածութեան կ'ենթարկուի ան:

Բերիոյ թեմի հայոց առաջնորդական տեղապահ՝ Յակոբ Մ. Վրդ. Արսլանեան, 1875 թ.ին կը հաստատէ սահմանադրական կարգեր: Կը

կազմէ առաջին Գաւառական ժողովը, որ կ'ընտրէ կրօնական եւ քաղաքական ժողովները: Շուրջ վեց ամսուայ աշխատանքէ մը ետք, Քաղաքական ժողովի աջակցութեամբ՝ ան հիմնովին կը բարեփոխէ ազգ. վարժարանը, զոր ի պատիւ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի՝ կը կոչէ Ներսէսեան Ուսումնարան: Ուսումնարանը իր դռները կը բանայ 21 Փետր.ի 1878 թ.ին, ինչ որ կ'երեւի տեղապահ Վարժապետին կողմէ Պատրիարք հօր ուղարկուած նամակի բովանդակութենէն¹:

Նեսէսեան Ուսումնարանը՝ մինչեւ 1890-ական թուականներու կէսերը, բարեկարգութեան համար սուր վիճարանութիւններու առարկայ կը դառնայ, սակայն լուրջ յառաջդիմութիւն մը չ'արձանագրեր. աշակերտութեան թիւը միշտ սահմանափակ է, ուսուցչակազմը՝ անբաւարար, ուսման մակարդակը նախակրթարանի տարրական դասարաններէն աւելի չի բարձրանար: Բայց յիշեալ թուականներէն ետք, մինչեւ վերջ, իրբեւ բարձրագոյն նախակրթարան կամ միջնակարգ վարժարան (իտատիէ)՝ կ'ապրի իր ամենէն ծաղկուն շրջանը ու կու տայ շրջանաւարտներ: Ասոր համաձայն ալ Ներսէսեան Ուսումնարանի պատմութիւնը կարելի է ներկայացնել երկու շրջաններով:

Ա. ՇՐՋԱՆ

Ուսումնարանը առաջին օրէն կ'ունենայ աղջիկներու եւ մանչերու առանձին վարժարաններ: Նախապէս ազգ. վարժարան կը յաճախէին մանչեր միայն. իսկ Յովհաննէս Քիւրքճանօֆի՝ 1860-ական թուականներու սկիզբը բացած աղջկանց վարժարանն ալ ունեցած է կարճատեւ կեանք: Նորբաց աղջկանց վարժարանին² տեսուչ կը նշանակուի Մեսրոպ Քահանան, իսկ մանչերու վարժարանին՝ Մատթէոս Աւագ Քահանան: Ուսուցչական կազմէն կը յիշուին՝ Ամասիայէն մասնաւոր հրաւիրուած Գէորգ Կարապետեան՝ հայերէն եւ զաղիերէն, Թաղէոս Քահանայ՝ արաբերէն, Առաքել Աճէմեան՝ տաճկագիտութիւն, Կարապետ Մանուկեան՝ երաժշտութիւն: Ուսուցիչներու ամսական աշխատավարձերը «կանխաւ օրինաւոր ապահովութեան տակ առնուած է»³: Կ'ունենայ նաեւ հոգաբարձութիւն մը երկու անդամներով՝ Ղազարոս Ստե-

1. Արտաւագդ Արք. Սիրմէեան, Պատմութիւն Հայէպի Հայոց, Գ. հոր., Փարիզ, 1950, էջ 836-837:

2. Հայկական Սովետական Հանրագիտարանը աղջկանց վարժարանը կը յիշէ Վարդուհեաց անունով (տես՝ Ջ. հոր., «Հայէպ» յօդուածը, էջ 48): Անդ յիշուած ու մեզի ծանօթ այլ աղբիւրներու մէջ այս անուան չեմք հանդիպիր:

3. Արտ. Արք. Սիրմէեան, նշ. աշխ., էջ 837:

փանեան եւ Նիկողոս Մարգարեան՝ «առաջին կարգի ազգայիններէն»⁴: Նոյն թուին կը բացուի նաեւ Ուսումնարանի գրադարանը՝ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի Պոլսէն նուէր առաքած գիրքերով⁵:

Յակոբ Ծ. Վրդ. Արսլանեանի կողմէ եւ Պոլսոյ Պատրիարքարանի իսկ յանձնարարութեամբ կատարուած այս փոփոխութիւնները բաւարար չեն նկատուիր: Նոր նշանակուած առաջնորդական տեղապահ Մովսէս Ծ. Վրդ. Կէօմրիւկճեանի նախագահութեամբ կայացած՝ 28 Օգոստոսի, 1877 թ.ին Ազգային Գաւառական Ընդհանուր Ժողովի բացման Հանդէսին, ատենաբան հիւր մը, Պարսկաստանէն վերադարձած մի ոմն Նազարէթ, ցաւ կը յայտնէ Վարժարանին խեղճ վիճակին համար ու ժողովէն՝ զայն բարելաւելու միջոցներ ձեռք առնել կը խնդրէ⁶:

Հալէպէն նամակագիր մը (***) , հետեւեալ շափազանցութեամբ կը ներկայացնէ վիճակը. «Վարժարանը տակաւին սպանդարան մ'է, ուր աշակերտներն ազգի եւ մարդկութեան օգտակար անդամներ լինելու տեղ հրէշներ կ'դառնան: Ո՛չ օրինաւոր ժողով ունի, ոչ վարչութիւն»⁷: Ասոր պատասխանատուն, դարձեալ ըստ նամակագրին, «երկու ճիւղական հին կուսակցութիւններն են, որ կարծես թէ ուխտած են ազգին տունը փլելու: Մինչեւ որ անոնց երկու պարագլուխները չանհետանան՝ ժողովուրդը չպիտի հանդարտի եւ որեւէ օգտակար ձեռնարկութիւն չպիտի լինի»⁸: Նամակագիրը կրթութեան գործին բարե-

4. Նոյնը:

5. Նոյնը:

6. Նոյնը, էջ 843:

7. ***, Հալէպ, «Արեւիկեան Մամուլ», Թ. Տարի, 1879, Օգոստ., էջ 173:

8. Նոյնը: Նամակագիրը շարունակելով կը գրէ. «Երբեմն չորպաճիներ ունեինք, հիմակ էֆէնտիներ, որոց մին Օսմանեան երեսփոխանութեան անդամ ընտրուած էր, որ իր խոստման համեմատ, ազգային 40,000 դուրուշ եկամուտով Ազգային դպրոցը բարեկարգելու տեղ, իր զուակներն Եւրոպա կ'ուղարկէ կղերականաց դպրոցը տարեկան 30 ոսկի վճարելով... իսկ Տէր Մարգարեաններն իրրեւ բշնամի Ազգին, ատելով կ'ատեն ամէն զարգացում» (նոյնը): Այս կծու մէջբերումները ըրինք երկպառակութեան գլխաւոր դերակատարներուն ու նամակագրին (***) , ինքուրիւնը ենթադրաբար որոշելու նպատակով: Արդարեւ, ինչպէս կը բացայայտէ Պատմութիւն Հալէպի Հայոցը (տես՝ Գ. Կար., էջ 842-856), 1877 - 1878 տարիներու Գաւառական Ժողովի նիստերը երկու կողմերու միջեւ սուր վիճարանութիւններու ու հակամարտութիւններու ներկայացում կը դառնան: Կողմերէն մէկը Նիկողոս Տէր Մարգարեանն է իրեններով, իսկ միւս կողմը՝ Գարաբեան ընտանիքի մարդիկ: Անոնց մէջ է նաեւ Մամուկ Գարաբեանը: Սա եղած է Մամուկի դատախազ, Հալէպի քաղաքապետ, Օսմանեան անդրանիկ ժողովի անդամ (տես՝ Վ. Ս., Հալէպի Ազգային Վարժարանը եւ Իսկէնտէր Գարաբեան, «Աուրիախայ Տարեցոյց», Բ. Տարի, 1925, էջ 181): Նամակագրին ծանր ակնարկութիւնները, ինչպէս կ'երեւի, կ'երթան Նիկողոս Տէր Մարգարեանին եւ Մամուկ Գարաբեանին (Պատմութիւն Հալէպի Հայոցը վերջին մականունը, երբեմն նոյն անձը կը յիշատակէ Խարաբեան,

լաւումը հնարաւոր կը նկատէ միայն, երբ «արտաքին անկախ ոյժ մը Արարատեան ընկերութեան նման», իր վրայ վերցնէ գործի կազմակերպումը⁹:

1880 թ-ի Փետրուարին տեղի կ'ունենան Գաւառական Ժողովի յաջորդական նիստերը, որոնց հիւրաբար կը նախագահէ Սսոյ Աթոռի Քէֆ-սիգեան Կաթողիկոսը, իսկ ատենապետութիւնը կը վարէ Կիրակոս Ղազանճեանը¹⁰: Սա առաջին իսկ նիստին «կ'առաջարկէ բարեկարգել, զարգացնել վարժարանը, ապահովել ազգային կալուածներու եկամուտները, բանալ ընթերցարան, կազմել ընկերութիւններ եւ հոգածու ըլլալ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի նախաձեռնութեամբ հաստատուած Միութեան Հայոց Ընկերութեան, Կիլիկեան Ընկերութեան մասնաճիւղ մը հաստատել եւ ի սրտէ աշխատիլ ազգային ամէն տեսակի յառաջդիմութեանց»¹¹:

Կիրակոս Ղազանճեան 1880 թ-ի սկիզբը գործով Հալէպ գտնուող յայտնի հայ մըն է, Երզնկայէն, ուր ալ ստացած է իր հիմնական կրթութիւնը: Ան սահմանադրական կարգերու ջերմ հաւատաւոր մը, տարածող մը, պետական եւ ազգային ազդեցիկ յարաբերութիւններու տէր անձնաւորութիւն մըն է, իր եղբօր՝ Յարութիւնի հետ: Պաշտօնի բերումով եղած է Արեւելեան Հայաստանի եւ Թուրքիոյ արեւելեան շրջանէն շատ մը վայրեր, որոնց մասին տեղագրական, հնագիտական, ազգագրական արժէքաւոր տեղեկութիւններ հաղորդող ճամբորդական գրութիւններ ալ ունի, մէկտեղուած գրքոյկի մը մէջ՝ «Սառն Նամակներ Ուղեւորութեան» (Պոլիս, 1886) խորագրով: Ասոր մէջ Հալէպի նուիրումը բաժինը գրուած է 1880 թ-ին: Ունի նաեւ երկու յօդուածներ Հալէպ քաղաքի հնութեանց եւ տեղւոյն հայոց մասին, մին՝ 1880 թ-ի «Մասիս»ին մէջ, միւսը՝ նոյն տարուայ «Արեւելեան Մամուլ»ին մէջ: Առաջինը ձեռքի տակ չենք կրցած ունենալ:

Կ. Ղազանճեան, իբրեւ ատենապետ, կարեւոր դեր կ'ունենայ 1880 թ-ի Գաւառական Ժողովի նիստերուն: Ան բուռն երկպառակութիւններ

Ղարաբեան, Ղարաբա, Գարաբեան ձեւերով): Ըստ երեւոյթիմ, այս երկպառակութիւններուն մէջ որոշ դեր ունէին ընտանեկան հաշիւները, որովհետեւ Գաւառական Ժողովի անդամներէն Պետրոս Պեգիրկեանեան՝ նիստի մը ընթացքին կը յայտնէ, թէ Տէր Մարգարեան եւ Գարաբեան «կուսակցութիւններու» գոյութիւնը «կը տնէ քառասուն տարիէ ի վեր» (Ա. Արք. Սիրմէեան, *նշ. աշխ.*, էջ 847): Այս արտայայտութիւնը, ինչպէս եւ այդ նիստերուն ուրիշ տեղ մը արտայայտուած Պետրոս Պեգիրկեանեանի անկախ ու համարձակ մտածողութիւնը (նոյնը, էջ 852) մեզի մտածել կու տան թէ վերոյիշեալ նամակագիրը ինքը կրնայ ըլլալ:

9. ***, Հալէպ, էջ 175:

10. Պատմութիւն Հալէպի Հայոցի մէջ կը յիշատակուի Գազանճեան ձեւով:

11. Արտ. Արք. Սիրմէեան, *նշ. աշխ.*, էջ 859:

րու մէջ ապրող հայկական կեանքի մը հետ գործ ունէր: Իրեն անծանօթ չեն տեղւոյն հակամարտութիւնները, որոնց մէջ գործող ուժերու մասին հետեւեալ պատկերը կու տայ. «Հարուստ եւ յառաջադէմ ազգայինք կան, ոմանք միապետական բնութիւն ունենալով կամ գործի չեն խառնուիր կամ եթէ խառնուին՝ ժամանակին հետ չեն կրնար ընթանալ, ոմանք փառք եւ շահ փնտոելով միայն իրենց անձը կ'մտածեն, ոմանք ալ տգէտ եւ ազգային մտածում չունին. փոքր մաս մը կայ որ ի սրտէ կ'ջանան, բայց սակաւաթիւ ըլլալով չեն կրնար գործ մը առաջ տանիլ: Արհեստաւորները ընդհանրապէս խաղաղասէր մարդիկ են, բայց ոմանք կ'վստիան հարուստներէն, ոմանք գործիք եղած են, իսկ ողջամիտ մաս մը կայ, եւ այս ալ կերպով մը ճնշուած է: Պանդուխտներու մեծ մասը ազգասէր է եւ առատ տուրք կ'վճարէ ազգին, բայց մինչև ցարդ ազգային գործերէ ձեռնպահ կ'մնայ: Վերջապէս խղճալի վիճակ մը ունի Հալէպը»¹²:

Ահաւասիկ այս իրադրութեան մէջ, Կիրակոս Ղազանճեան, վերին նամակագրին նման, դպրոցական գործի յառաջդիմութիւնը կարելի կը գտնէ միայն արտաքին ուժի մը հսկողութեան պարագային, միշտ նկատի ունենալով Պոլսոյ Կիլիկեան Ընկերութիւնը: Գաւառականի նիստերուն ան կրքոտ կերպով կ'արծարծէ ազգային վարժարանի բարեկարգութեան հետ կապուած հարցերը: «Ճշմարիտը, — կը գրէ ան, — երբ կը տեսնեմ 370 տուն հայ բնակիչ ունեցող կեդրոն քաղաք մը մ'որու դպրոցը միայն 70-80 աշակերտ կ'յաճախեն (մինչդեռ միջին հաշուով պէտք է 3-400 ուսանող ըլլայ), խելքս գլխէս կ'թոփ եւ կ'սկսիմ տխուր աչքով դիտել մեր ապագան»¹³:

Քննութեան կ'ենթարկուին հետեւեալ հարցերը.

ԳՊՐՈՅԱԿԱՆ ՇէնՔ— Չափազանց նեղ եղած են դպրոցին համար գործածուող շէնքերը, ընդամէնը 2-3 սենեակ, որոնց մէջ հազիւ բաւած են 50 աշակերտները տղոց վարժարանին, իսկ աղջկանց վարժարանը ունեցած է 30 աշակերտուհի եւ վարժուհի մը, որ «փոքրիկ տեղ մը կը նստի»¹⁴: Բաւարար սենեակներ ունենալու պարագային պիտի աւելնար աշակերտութեան ու ուսուցչակազմի թիւը, եւ դասարանային բաժանում պիտի ըլլար, բան մը, որ գրեթէ չունէր դպրոցը: Երեսփոխաններէն ոմանք կ'առաջարկեն մանչերու վարժարանին շէնքը յատկացնել

12. Կ. Ղազանճեան, Հալէպի Հնութիւնները, «Արեւիկեան Մամուլ», Թ. Տարի, 1879, էջ 472-473:

13. Նոյնը: Թողուածագիրը տեղւոյն բնիկ առաքելական հայոց թիւը 370 ընտանիք կը հաշուէ, եւ «2000-ի չափ պանդուխտ ալ կայ 74 քաղաքներէ» (նոյնը, էջ 472):

14. Նոյնը, էջ 472:

աղջիկներուն, իսկ Ս. Աստուածածին եկեղեցին վերածել մանչերու վարժարանի: Մէկ թաղի ու բակի մէջ իրար կից երկու եկեղեցիներու գոյութիւնը անկարգութիւններ կը պատճառէր քահանաներուն եւ ժողովուրդին մէջ: Ս. Աստուածածին եկեղեցին աւելորդ կը նկատուի¹⁵: Ըստ երեւոյթին, այս առաջարկը մեծ վլվլուք կը ստեղծէ, յաջորդ նիստին կը հասնի լուր այն մասին, թէ կարգ մը կիներ ժողով կը գումարեն, ու իրենց կրօնական զգացումին վիրաւորանք կը նկատեն եկեղեցին այս նպատակով գործածելը: «Ես կը զարմանամ, — կը յայտնէ ատենապետը, — որ Վեհ. Կաթողիկոսի, կրօնականի եւ գաւառականի բովէն անցնելիք խնդրոյ մը շուրջ այժմէն ղիտողութիւն կ'ըլլայ եւ այն ալ չորս-հինգ տիկիներու կողմէ, որ հաւանաբար գրել-կարդալ ալ չեն գիտեր, ուստի կը խնդրեմ, որ նման խնդիրներու առթիւ խոհեմութեամբ վարուինք եւ թոյլ չտանք չարամիտներուն, որ ազգին յառաջդիմութեան բարի գործերը խափանելու չար մտադրութեամբ, երթան գրգռեն բարեպաշտ եւ կրօնասէր ռամիկ ժողովուրդը ու տիկիները»¹⁶: Ու մաղթանք կ'ըլլայ, որ Հալէպի հայ կանայք ալ նուիրուին կրթական գործի յառաջդիմութեան, ընկերութիւն մը կազմեն ու աշխատին բարձրացնել աղջկանց վարժարանը իր խեղճութենէն: Կը բերուի Ուլնիոյ (Չէյթունի) օրինակը: Կաթողիկոսն ան նոյն իմաստով ելոյթ մը կ'ունենայ¹⁷:

Կաթողիկոսը կ'առաջարկէ յարմար ու օղակէտ տեղ մը դպրոցական նոր շէնք կառուցել: Ասիկա հարցին հիմնական լուծում կրնար բերել: Կիրակոս Ղազանճեան հանդէս կու գայ այս առաջարկին դէմ ու անհրաժեշտ կը նկատէ եկեղեցւոյ դիմացի սալոնը վերածել դպրոցի: Այդ շէնքը տարեկան 22 օսմ. ոսկի վարձքով կը տրուէր¹⁸: Ղազանճեան նոր շէնք մը շինելու չափ նիւթական կարելիութիւններ չէր տեսներ գաղութին մէջ:

Մեզի ծանօթ չէ, թէ հարցը ինչ ձեւով իր լուծումը կը գտնէ այդ նիստերուն, բայց հետագայ տարիներուն իբրեւ դասասենեակ գործածուած կը գտնենք ոչ միայն ազգապատկան մօտիկ շէնքեր, այլեւ նոյնիսկ Ս. Աստուածածին եկեղեցին:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԻԻՏՃԷ— «Դպրոցի անկեալ եւ խանգարեալ վիճակը» առաւելաբար կը բխէր նիւթական աղբիւրներու պակասէն: Իբր առաջին դարման կ'առաջարկուի հաստատուն գումար մը յատկացնելու

15. Արտ. Արք. Սիրսէեան, *նշ. աշխ.*, էջ 860:

16. Նոյնը, էջ 861:

17. Նոյնը:

18. Նոյնը, էջ 863:

որոշում առնել¹⁹: Յետ քննութեան կը տեսնուի, որ 12,000 օսմ. ոսկի արժէքով ազգապատկան կալուածներ կան: Անոնց տարեկան եկամուտը եղած էր 380 օսմ. ոսկի, որ նախապէս չարաչահուած է. դպրոցը չէ օգտուած անկէ պէտք եղած չափով: Կը յայտնուի, որ այդ տարին 400 օսմ. ոսկի կապալով վարձող կայ: Կ'որոշուի 200 օսմ. ոսկին յատկացնել դպրոցին²⁰: Ուրիշ տեղ մը կը յայտնուի, թէ անկէ առաջ ազգային կալուածներու եկամուտէն միայն 80 ոսկին յատկացուած է Ուսումնարանի երկու բաժիններու ծախսերուն²¹: Ասոր դիմաց գաւառականի քուէարկած 200 ոսկին գործադրութեան պարագային լուրջ բարելաւում մը կ'ենթադրէ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒ ԿԻԹԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ— Կաթողիկոսը, սահմանադրական ոգիին համաձայն, կ'առաջարկէ կազմել նոր Ուսումնական Խորհուրդ մը՝ Հալէպի հայ ուսումնական մարդոցմէ: Կիրակոս Ղազանճեան կ'առարկէ՝ յայտնելով որ ուսումնական խորհուրդ մը ստեղծելու համար յարմար անձերը Հալէպի մէջ կարելի չէ գտնել, որովհետեւ «Ուսումնական Խորհուրդի անդամները տեսուչներուն չափ եւ աւելի հմտութիւն ունենալու են»: Դպրոցը «խելացի ու վսեմ տնօրինութեամբ» կառավարուելու համար՝ կ'առաջարկէ զայն ղնել Կիլիկեան Ընկերութեան ուղղակի հսկողութեան տակ: Երկար ու բուռն վիճարարանութիւն կ'ըլլայ: Ղազանճեան կը պաշտպանէ իր առաջարկը, օրինակներ բերելով Ներսէս Վարժապետեանի հսկողութեան տակ գործող Կիլիկեան Ընկերութեան կողմէ գաւառներու մէջ տարուող մեծ ու հիանալի գործէն: Կաթողիկոսը հաւանաբար չ'ուզեր գաղութը զրկել կրթական գործին մէջ մաս ունենալէն ու անհրաժեշտ կը նկատէ, որ դպրոցը գտնուի տեղական հոգաբարձութեան հսկողութեան տակ, իսկ տեսուչը խնդրուի Պոլսէն, այսինքն՝ Կիլիկեան Ընկերութենէն: Կ. Ղազանճեան կրկին կ'առարկէ: Ժողովը վիճարանութիւնը բաւ համարելով կը հեռագրէ Պոլիս՝ խնդրելով, որ Հալէպի Ազգ. Վարժարանը ենթարկուի Կիլիկեան Ընկերութեան²²:

Գաւառականի Ապրիլ 13-ի նիստին Կաթողիկոսը արդէն մեկնած է: Ատենապետ Կ. Ղազանճեան կարգալ կու տայ Կիլիկեան Ընկերութեան իրենց դիմումին դրական պատասխանը: Անկէ առաջ, ան նախորդ ատենագրութեան մէջ ճշդելիք կէտերու մասին խօսելով կը յայտնէ, թէ սխալ է, որ «Կաթողիկոսը կ'ուզէր կալուածոց տէր կամ միւթէվէլլի ըլ-

19. Նոյնը, էջ 860:

20. Նոյնը, էջ 862:

21. Կ. Ղազանճեան, Հալէպի Հնութիւնները, էջ 472:

22. Արտ. Արք. Սիրմէեան, Նշ. աշխ., էջ 862-863:

լալ, թէ սոյն կալուածները սահմանուած են ազգ. վարժարանին եւ թէ Կաթողիկոսը իրաւունք չունի կալուածոց միջամտելու»: «Պատմութիւն Հալէպի Հայոց»ը յստակ կերպով չի յայտներ, թէ ինչ կալուածներ են ասոնք: Կարելի է մտածել թէ վերել յիշուած 200 օսմ. ոսկի տարեմուտը ապահովող կալուածները՝ նիստի մը ընթացքին, ժողովին կողմէ դպրոցին սահմանուած ըլլալու որոշում առնուած է: Դպրոցը Կիլիկեան Ընկերութեան հսկողութեան յանձնուելով այդ կալուածներու հսկողութիւնն ալ ինքնաբերաբար պիտի անցնէր անոր: Կաթողիկոսը թեմական այդ կալուածները կաթողիկոսութեան վերահսկողութենէն դուրս չձգելու միտումով ալ՝ այդպիսի կէտ մը անցուցած ըլլալու է իր նախագահած վերջին ժողովին: Ընդ որում, Քէֆսիզեան Կաթողիկոս այդ ժողովին փափաք կը յայտնէ, որ ազգային կալուածները աճուրդով վարձու տալու սովորութիւնը շարունակուի, եւ Գաւառական ժողովը չզլանայ իր հսկողութիւնը ընել կալուածներուն վրայ²³:

Հակառակ 1880 թ.ի Գաւառականի նիստերուն առնուած որոշումներուն՝ դպրոցը քիչ բարեփոխութիւններու կ'ենթարկուի, ու առնուած որոշումները՝ ըստ երեւոյթին, մեծ մասով չեն իրագործուիր: Հարցը այն էր, որ Հալէպի մէջ դեռ ի զօրու էր այնպիսի ճակատ մը, որ խորքին մէջ դէմ էր Պոլսոյ Կեդրոնական վարչութենէն բխած տրամադրութիւններուն: Ասիկա գաղութին հին մտայնութիւնն էր, որ կը յաջողի դպրոցին նիւթական նպաստը հայթայթելուն՝ արգիլել ու անգործութեան մատնել Կիլիկեան Միութեան ներկայացուցիչը: «Հին կուսակցութիւն մը՝ լուսոյ ու նորութեան թշնամի՝ ի նպաստ վարժարաններու ազգովին եղած տնօրէնութեանց կ'դիմադրէ եւ մեծ. Կիրակոս Էֆէնտի Ղազանճեանի ջանիւք կրթութեան համար յատկացուած չնչին գումարն (մօտ 30,000 դուրուշ) հայթայթելու կ'արգիլէ եւ այսպէս Կիլիկեան Ընկերութեան կողմէ այս տարի Բերիա դիմող Սանտալճեան պ. Էֆէնտիին գրեթէ անգործութեան կ'դատապարտէ, մինչդեռ երբ Երուսաղէմի միարան վահան վարդապետ մը կ'ելլէ, չգիտենք ինչ նպատակի համար՝ հանգանակութիւն բանալու եւ չորս հինգ հարիւր ոսկի անմիջապէս ձեռք կ'ձգէ: Այս ողբալի երեւոյթ մ'է, եթէ երբեմն, ինչպէս կ'ըսուի, եկեղեցին կ'չիւնէր դպրոցը, հիմակ զայն կ'քանդէ եւ չնկատեր որ նոր գաղափարներու շնորհիւ դպրոցները պիտի շինեն յառաջդիմասէր եւ ազատական եկեղեցի մը, ազգայնութեան լուսամիտ աւանդապահ մը...»²⁴:

Սահմանադրականները Հալէպի եւ Կիլիկիոյ մէջ ընդհանրապէս, այս

23. Նոյնը, էջ 864:

24. Կիլիկիոյ Աղէտը, «Արեւիքան Մամուլ», Ժ. Տարի, 1880, Սեպտ., էջ 300:

ընդդիմադիր «հին կուսակցութեան» պատասխանատուն կը նկատեն կաթողիկոսը. «Բերիոյ ազգայնոց երկպառակութեան եւ հետեւաբար յետադիմութեան պատճառ՝ մանաւանդ Կիլիկիոյ ներկայ Վեհափառ Կաթողիկոսն եղած է, կ'ըսուի, որ երբեմն-երբեմն գալով քաղաքս, փոխանակ հայրաբար եւ անձնուիրութեամբ ժողովրդեան ճշմարիտ շահուց համաձայն ընթացք մը բռնելով, անոր զաւակաց դաստիարակութեան կենսական եւ սրբազնագոյն գործին մղում տալու, ընդհակառակն, իւր անձնական շահուց գձուձ տեսակէտով գործած է միշտ եւ գրեթէ յաջողած է ամէն անգամ, երբ ժողովուրդը կրցած է բաժնել իրարմէ»²⁵:

Կիլիկիոյ Կաթողիկոսը առաւելաբար իր Կաթողիկոսական Աթոռին շահն ու հեղինակութիւնը պիտի պահպանէր, ճիշդ ատոր մէջ տեսնելով իր վիճակին մէջ մտնող Կիլիկիոյ, Մարաշի եւ Հալէպի հայոց կրթական ու դպրոցաշինական գործին բարելաւումը: Կաթողիկոսը իր Աթոռին հետզհետէ անշքացող իշխանութիւնը վերականգնելու համար պիտի գործակցէր տեղական հին ուժերուն: 1880 թ.ի Սեպտեմբերին, «Արեւելեան Մամուլ»ը աւելի իրապաշտօրէն կը ներկայացնէ կացութիւնը գրելով. «Ազգային Կեդրոնական Վարչութիւնն՝ որ Կիլիկիոյ իրաց այս վիճակին գլխաւորապէս պատասխանատու է՝ միշտ թիւր քաղաքականութեան մը մէջ կ'յամառի, Սիսն անշուք ու կիսակործան թողլով եւ անոր Կաթողիկոսին տալով պարզապէս ժամկոչի մը պաշտօն: Պէտք է վերականգնել Սիսն, որպէսզի վերջէն՝ երբ ժամանակը գայ, չ'ստիպուինք ըսելու որ շատ ուշ սթափեցանք, ինչպէս որ մի քանի տարի է ի վեր նոյնը կ'կրկնենք Հայաստանի համար»²⁶:

Ազգային կեանքի մէջ երկար ատեն է ի վեր շարունակուող այս երկպառակութեան մէջ իր բաժինը ունէր այն, որ գաղութը չունէր որոշ դիմագիծ, կազմուած ըլլալով ինչպէս հին, ընդհանրապէս արաբախօս ընտանիքներէ, այդպէս ալ Փոքր Ասիոյ տարբեր շրջաններէն եկած հայերէ: Հալէպէն թղթակից մը ասիկա գաղութի բաժանումներուն գլխաւոր պատճառը համարելով կը գրէ. «զանազան կողմերէ հաւաքուած ըլլալով՝ չունին ոչ գաղափարաց եւ ոչ գզացմանց միութիւն եւ խիստ դժուարին գործ է, չըսեմ անկարելի, զանոնք ուղղել ի մի կէտ ազգային նպատակի, առ ի չգոյէ միօրինակ կրթութեան: Երբեմն տեղւոյս Ազգային Վարժարանն Միացեալ Ընկերութեանց իսկ յանձնած է, բայց յիշեալ ընկերութիւնք ալ յաջողած չեն յարատեւութեամբ գործել աստ»²⁷:

25. ***, Բերիոյ Վիճակը, «Արեւելեան Մամուլ», ժՁ. Տարի, 1886, նոյ., էջ 500:

26. Կիլիկիոյ Ազգայն., էջ 300:

27. ***, Բերիոյ Վիճակը, էջ 500:

Այս իրադրութեան մէջ Ազգ. Նեսէսեան Ուսումնարանը, իր աղջրկանց եւ մանչերու վարժարաններով, չէր կրնար նախանձելի վիճակ մը ունենալ իր տեսչութեամբ, դպրոցական կահոյքներով եւ ուսման մակարդակով: Դիտելի է որ աղջկանց վարժարանի յատակը դեռ փսիաթ մըն ալ չկայ, աշակերտուհիները տունէն բերած իրենց օթոցներուն վրայ գետին նստած դասաւանդութիւն կ'ընեն: Միակ նորութիւնը կ'ըլլայ Տիկնանց Մարիամեան Ընկերութիւնը, որ կը հիմնուի 1882 թ. Նոյեմբերի 1-ին: 1883 թ. Փետրուարի 10-ին, ընկերութիւնը դպրոցին կը հայթայթէ չորս կտոր փսիաթ²⁸:

Այս շրջանին, դպրոցի ուսուցչական կազմերու մասին կան հետեւեալ տեղեկութիւնները. Կիրակոս Ս. Ղազանճեան՝ «Հալէպ» վերնազրուած տեղազրական յօդուածին մէջ (1880 թ.) կը գրէ. «Բնիկ եւ պանդուխտ վարժապետներ եւ Տ. Վ. Զօրեան վարժուհին կ'աշխատին անձնուիրութեամբ»²⁹: Տիկին Վարդուհի Զօրեան եղած է Հալէպի ազգ. վարժարանին առաջին ուսուցչուհին, 1880 թ. ին պաշտօնի անցած: 1876 թ. էն ի վեր տաճկագիտութեան ուսուցիչ է Առաքել Աճէմեանը, որ նաեւ Գաւառական ժողովի անդամ է: 1880 թ. ին Թաղէոս Քահանան ուսուցիչ կը գտնենք: Նոյն շրջանին պէտք է դնել հայերէնի ուսուցիչ Աւետիս Ֆէթթէլեանի պաշտօնավարութիւնը: 1883 - 84 տարեշրջանին փոխ-տեսուչ եւ ուսուցիչ է Սահակ Քհն. Շահվեքիլեանը³⁰:

1885 թ. ին դպրոցի ամսական պիւտճէն 10 օսմ. ոսկի է: Ընդհ. տեսուչն է առաջնորդական տեղապահ Մկրտիչ Մ. Վրդ. Սահակեան, ուսուցիչներն են՝ Միքայէլ Միհրոյեան՝ «նախակրթարանի մանկավարժ», Յովհաննէս Ղարաճեան՝ «հայկարան դասատու», Մկրտիչ Մանսուրեան՝ քարտուղար եւ օգնական դասատու, Եռլուսի Սուքքար՝ արաբերէնի, Ատանայէն հրաւիրուած Միհրան ձերահեան՝ երաժշտութեան, Առաքել Աճէմեան՝ տաճկագիտութեան, 1876 թ. էն, Վարդուհի Զօրեան՝ 1880 թ. էն, Անթուն Բաֆուլ՝ տնտես: Կայ նոր ուսուցիչ մը եւս, Յարութիւն Կարիկեան³¹: Այս վերջինը 1886 թ. ին կը հրաժարեցուի «անբաւարարութեան» պատճառով, ու անոր տեղ կը հրաւիրուի այնթապցի Գէորգ Թաղէոսեանը, Գէորգեան ձեմարանէն: Ամսական երեք ոսկի թոշակով ասոր կը յանձնուի դպրոցի ընդհանուր հսկողութիւնը, գործակից կը նշանակուի ժողովական Կարապետ Գէորգեանը³²: Ասիկա Ուսումնարանի կեանքին մէջ առաջին զէպքն է, երբ

28. Արտ. Արք. Սիրսէեան, նշ. աշխ., էջ 881-882:

29. Կ. Ղազանճեան, *Քսոն նամակներ Ուղեւորութեան*, էջ 167:

30. Արտ. Արք. Սիրսէեան, նշ. աշխ., էջ 867, 859, 832, 867, 888:

31. Նոյնը, էջ 867:

32. Նոյնը, էջ 866:

աշխարհականի մը կը վստահուի դպրոցին ընդհանուր տեսչութիւնը, ազգ-իշխանութիւնը ներկայացնող անձի մը գործակցութեամբ: Դիտելի է, որ նախորդ տարուայ 10 հոգինոց պաշտօնէութեան յատկացուած ամսական 10 օսմ. ոսկի ամսաթոշակին դիմաց՝ նորեկին կը յատկացուի 3 ոսկի: Սա դպրոցը բարեկարգելու ճիգի մը կ'ակնարկէ: Ուսուցիչներուն կը վճարուէր 12 ամսավճար, որ կ'երեւի Տիկին Վարդուհի Զօրեանին տարեկան 12 ոսկի վճարելու յիշատակութենէ մը³³:

Ազգային իշխանութիւններուն նիւթ կը դառնայ մանուկներուն անխաթար դաստիարակութիւնը, օտար քաղաքի մէջ՝ անոնց բարոյականին վրայ ամառնային արձակուրդներուն ձգած ժխտական ազդեցութիւնը, հաւանաբար նաեւ նորեկ ընտանիքներուն փոքրիկներուն քով հետզհետէ ծաւալող արաբախօսութիւնը: Հին ընտանիքները՝ անունով, բարքով ու լեզուով արդէն արաբացած էին: Դեռ 1880 թ.ին Կիրակոս Ս. Ղազանճեան ասոր անդրադառնալով կը գրէ. «Նոյնիսկ հին հայոց վարժարանի (իմա՝ Ներսէսեանը, Յ. Չ) տղայք կը խօսին ընդ միմիանս արաբերէն եւ բնիկ տղայոց անուններն ալ իրենց ծնողաց անունին նման Եուսուֆ, Իպրահիմ, Խելիլ, Ֆէտտալ, Ճրճիս, Ճէվհէր, Եագուլթ եւլն»³⁴: Ահաւասիկ այս իրադրութենէն թելադրուած, 1886 թ.ի ամրան, Քաղաքական ժողովի որոշումով բաց կը պահեն երկսեռ դպրոց մը, որպէսզի դպրոցական փոքրիկներ չդեզերին ու անյարմար ընթացքներու մէջ չզտնուին: Ամառնային դպրոցին մէջ ծառայել չուզող ուսուցիչները հրաժարուած նկատելու որոշում կ'առնուի:

Այդ օրերուն ներքին ռիսերն ու երկպառակութիւնները ինչ որ չափով նուազած են երեւի. կազմակերպչական կեանքի մէջ որոշ յառաջդիմութիւն մը ձեռք բերելու համար սահմանադրական փուլուած կարգերը վերականգնելու կարիք կը զգացուի: 1886 թ.ի Նոյեմբերին՝ Հալէպէն նամակագիր մը՝ (***) կը հաղորդէ որ տեղւոյն հայերը «Իբր իրենց ցաւոց միակ դարման» Պոլսոյ կեդրոնական Վարչութեան կը դիմեն բանիբուն ատաջնորդական տեղապահ մը խնդրելու. «Վարչութիւնը զրկեց կրօնական ժողովոյ անդամներէն Արժանապատիւ Մաղաքիա Մ. Վ. Տէրունեան հայրն»³⁵, որ երկու ամիս չեղաւ յաջողեցաւ Գաւառական Ընդհանուր ժողով մը կազմել ըստ օրինի, որոյ 15 անդամք քաղաքիս ազգայիններէն ընտրուեցան, երեքն եկեղեցական, իսկ 6 երեսփոխանք ալ թեմերէն ուզուած են, ինչպէս Այնթապէն, Քիլիսէն, Անտիոքէն,

33. Կ. Ղազանճեան, Հայէպի Հնութիւնները, էջ 472:

34. Կ. Ղազանճեան, Խառն Նամակներ Ուղեւորութեան, էջ 168:

35. Պատմութիւն Հալէպի Հայոցը սիւլամաբ կը յայտնէ թէ տեղապահը Հալէպ կը հասնի 1887 թ.ի Նոյեմբերի սկիզբը (տես՝ էջ 869):

Պէշյանէն եւ այլն, որոնց ընտրութեամբը, կը յուսացուի թէ մօտերս ամէն ինչ օրինաւոր եւ ազգաշահ շաւղի մը մէջ կը մտնէ»³⁶:

Կրթական կեանքի բարելաւումը զաղութի հիմնական ընելիքն է: Քաղաքական ժողովը կ'առաջացնէ տնտեսական եւ ուսումնական խառն խորհուրդ մը: Կը թուի թէ «կրթական խնդիրն այս անգամ լրջօրէն ձեռ պիտի առնուի, եթէ արտաքոյ կարգի արգելքներ յերեւան չգան»³⁷: Նամակագիրը, որ 1879 թ.ի նոյն Պետրոս Պեղիբեանեանը կրնայ ըլլալ, խօսքն ուղղելով Հալէպի հայոց կոչ կ'ընէ միութեան, ու յատկապէս կրթական գործին վրայ ծանրանալով, կը գրէ. «Դարձուցէք ձեր ակնարկը մի անգամ զձեզ շրջապատող ազգաց եւ ժողովրդոց վրայ եւ տեսէք թէ նոքա որպիսի միաբան ջանիւք եւ կրթասիրութեամբ իրենց վարժարանները բարեկարգ եւ յառաջադէմ վիճակի մէջ յառաջ վարել կը ճգնին, այնպէս որ կը նախանձիք դուք, գիտեմ, եւ կը փութաք ձեր գաւակներն ալ անոնց-օտար-վարժարաններն յղել, ուր անոնք բոլորովին օտար կրթութիւն մը կ'ըստանան իրենց ազգին եւ եկեղեցւոյն անպիտան եւ գուցէ վնասակար անդամները կը դառնան»³⁸:

Ինչպէս միշտ, այս անգամ ալ երեւի գոհ չեն մնար իրենց նոր տեղապահէն, ու Պոլիս կը դիմեն առաջնորդական ընտրութիւն կատարելու փափաքով: Անկէ առաջ կ'ընտրուի երեք հոգինոց դպրոցի հոգաբարձութիւն մը՝ Կարապետ Գէորգեան, Յովհաննէս Պուլոս, Ճրճի Թիւֆէնքճեան, «ընտրուելիք Առաջնորդին պաշտօնավարութիւնը դիւրացնելու» նպատակով³⁹:

Նորընտիր առաջնորդը՝ Մովսէս Մ. Վրդ. Կէօմրիւկճեան (1888 - 1894 թթ.) կը ձեռնարկէ դպրոցի բարեկարգութեան: Յատկապէս կ'աշխատի դպրոցին նիւթական հասոյթներ գտնել, եւ այդ մտքով՝ յուղարկաւորութեանց համար սակացոյց մը գործադրութեան կը դնէ⁴⁰:

Բայց մասնակի ու փորձուած միջոցները բաւարար չեն նկատուիր, 1889 թ.ի Սեպտ.ի 5-ին, առաջնորդ Մ. Վրդ. Կէօմրիւկճեանի թելադրութեամբ՝ վարժարանի հոգաբարձութիւնը կ'որոշէ նամակ գրել Կ. Պոլիս՝ Հայոց Միացեալ Ընկերութեան եւ Ազգանուէր Տիկնանց Միութեան խնդրելով «գէթ մէկ տարուան համար իրենք վճարեն տեսուչի մը եւ տեսուչի մը թոշակը»: Առաջնորդը նամակով մը կը խնդրէ Պատրիարքին միջնորդութիւնը⁴¹: Մեզի յայտնի չէ հարցին զարգացումը:

36. ***, Բերիոյ Վիճակը, էջ 500:

37. Նոյնը, էջ 501:

38. Նոյնը, էջ 501-502:

39. Արտ. Արք. Սիւրբէեան, նշ. աշխ., էջ 870:

40. Նոյնը, էջ 873:

41. Նոյնը, էջ 882:

Նոյն 1889 - 1890 տարեշրջանին Ուսումնարանը կ'ունենայ եօթ հոգինոց հոգաբարձական կազմ մը. Յակոբ ՔՀն. Տէր Յովհաննէսեան՝ նախագահ, Գառնիկ Ալեքսանդր՝ ատենապետ, Աղեքսանդր Ստեփանեան՝ գանձապահ, Ճրճի Թիւֆէնկեան, Ռաֆայէլ Մինասեան եւ Սեդրակ Եկաւեան: Յակոբ ՔՀն. Տէր Յովհաննէսեան կը նշանակուի տեսուչ՝ նախկին տեսուչ Առաքել Աճէմեանի փոխարէն: Դպրոցը կը նորոգուի ու կը կահաւորուի, հաւանաբար այս տարուէն կը սկսի նստարանագրասեղանի օգտագործումը: 300 դճկ. ամսաթոշակով Այնթապէն ուսուցիչ կու գայ Յակոբ Քուփէլեան: Կը հրաւիրուի նաեւ երաժիշտ մը, որ շուտով կը հրաժարեցուի: Կը կանոնաւորուին նաեւ Ուսումնարանի ներքին աշխատանքները: Նոր տեսուչը կը պատրաստէ դպրոցին ներքին կանոնադրութիւնը⁴²:

Մովսէս Վրդ. Կէօմրիւկեանի առաջնորդութիւնը կը վերջանայ 1894 թ.ին: Իր օրով զգալապէս բարեկարգուած Ուսումնարանը մինչեւ 1915 թ. անխափան յառաջդիմութեան մէջ է: Պետրոս Վրդ. Ներկարարեանի պաշտօնավարութեան օրով (1894-1904 թթ.)⁴³ կը սկսի Վարժարանի զարգացման երկրորդ շրջանը:

Բ. ՇՐՋԱՆ

Պետրոս Վրդ. Ներկարարեան նախ իբրեւ տեղապահ, ապա առաջնորդ, յաջող գործունէութիւն կ'ունենայ Հալէպի մէջ: Գաղութը հանդարտ է, պառակտումները չունին նախկին բռնկումները: Մասնաւորաբար զարկ կը տրուի շինարարական գործերու, որոնցմէ ոմանք առաջնորդը կ'իրագործէ իր անձնական միջոցներով: Առաջնորդի միջոցառումներուն մասնակից են ժողովականները:

1895 - 1896 թթ. Համիտեան ջարդերուն՝ Արեւմտեան Հայաստանէն ու Թուրքիոյ հայաբնակ շրջաններէն նոր հայեր կու գան ու կը հաստատուին Հալէպ: Գաղութը կը մեծնայ, իբրեւ դպրոց գործածուող նախկին կցկտուր շէնքերը անբաւարար կը նկատուին: Դպրոցական նոր ու յարմար շէնքի մը կառուցումը կը դառնայ անյետաձգելի պահանջք: Տեղապահը կը կազմակերպէ նուիրահաւաքում, որուն կը մասնակցին ժողովուրդին բոլոր խաւերը: Կը պատրաստուի յատակագիծը ու ճարտարապետ Եսայի Մարգարեան կը կառուցէ շէնքը՝ երկյարկանի շինու-

42. Նոյնը, էջ 882-883, 834:

43. Պատմութիւն Հալէպի Հայոցը՝ (էջ 883) Պետրոս Վրդ. Ներկարարեանի պաշտօնավարութիւնը կը դնէ 1894-1900 թթ.ուն, իսկ էջ 888ի վրայ կը յայտնէ թէ ան պաշտօնավարեց մինչեւ 1904 թ.:

թիւն մը, որ կը կանգնի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հարաւարեւելեան բակին մէջ, 1897 թ.ին⁴⁴:

Կրթական աշխատանքը յատուկ խնամքի առարկայ կը դառնայ յատկապէս 1897 թ.էն սկսեալ, երբ հոգաբարձութեան կազմի անդամ կ'ընտրուի մտաւորական յակումներով ծանօթ՝ Իսկէնտէր Գարաճեանը (1867 - 1919 թթ.), որ այդ պաշտօնը կը վարէ մինչեւ վերջ: Որդին է հոետոր Մանուկ Գարաճեանի, որուն անդրադարձանք քիչ առաջ: Իսկէնտէր Գարաճեան ուսած է Հալէպի ազգ. Վարժարանին մէջ, բայց ինքնաշխատութեամբ լայն զարգացում ձեռք բերած: Ան «Այծեամ» եւ «Ա. Մ. Սեւեան» գրչանուններով երբեմն աշխատակցած է «Բիւզանդիոն», «Արեւելեան Մամուլ» եւ «Հանդէս Ամսօրեայ» թերթերուն: Օրը օրին հետեւած է Ուսումնարանին աշխատանքներուն եւ յատկապէս իր շնորհիւ է, որ կարգ մը նորութիւններ կը մտնեն անկէ ներս: Այսպէս.

Կրթ.Աթ.ՈՇԱԿ— 1897 թ.ին առաջին անգամ ըլլալով աշակերտներէն թոշակ կը պահանջուի: Մինչ այդ դպրոցը «ազգային կալուածներու վտիտ եկամուտովը կը կառավարուէր. ժողովուրդը այն մտայնութիւնն ունէր թէ ազգային վարժարան ըսուածը պէտք է ձրի ըլլայ»⁴⁵: Ա. Մ. Սեւեան, որ նոյն ինքն Իս. Գարաճեանն է, Հալէպի հայերը կը բաժնէ երեք խումբերու՝ անտուն, տնուոր, բնիկ: Դպրոցը կը ծառայէր վերջին երկուքին միայն: Բայց անոնց դպրոցի բարեկարգութեան նկատմամբ ունեցած անտարբերութիւնը թերութիւն կը նկատէ, «մանաւանդ բնիկ Հալէպցիներուն, այնպէս որ իրենց զաւակաց դաստիարակութեան համար նոյնիսկ տարեկան մէկ երկու մէծիտ մը ծախսել կը զլանան: Տեղացիք սկիզբէն ի վեր այն համոզումն ունէին, թէ Ազգ. դպրոցը իրաւունք չունի թոշակ պահանջելու իրենց զաւակներու կրթութեան համար. այդ պատճառով է որ դպրոցի վարիչները միշտ դժուարութիւն ունեցած են տեղացիներէն տարեթոշակ առնելու»⁴⁶:

Բայց դարասկիզբէն տարեթոշակի վճարումը հետզհետէ վարժութեան կը վերածուի ու քանի մը տարուայ ընթացքին կը կրկնապատկուի հաւաքուած ընդհ. գումարին քանակը: Այսպէս՝ 1903 - 1904 տարեշրջանին գանձուած է 10,500 դուրուշ, 1904 - 1905-ին՝ 14,200, 1905 - 1906-ին՝ 18,000: Աղբատ ընտանիքներէն թոշակ չէ գանձուած⁴⁷:

44. Արտ. Արք. Սիւրմէեան, նշ. աշխ., էջ 886:

45. Վ. Ս., Հալէպի Հայ Ազգային Վարժարանը եւ Իսկէնտէր Գարաճեան, էջ 180:

46. Ա. Մ. Սեւեան, Հալէպի Հայ Գաղութիւն Անցեալն ու Ներկան, «Արեւիկեան Մամուլ», ԼՁ. Տարի, 1906, էջ 815:

47. Նոյնը:

կը յիշուի որ Պատերազմէն առաջ դպրոցի տարեծախսը տարուբերած է 150-200 օսմ. ոսկիի միջեւ, զոր կարելի չէ եղած գոցել աշակերտական գանձումներէն: Տարեծախսին հազիւ կէսէն մինչեւ երեք քառորդը կարելի եղած է ապահովել այդ ձեւով: Գոյացած բացը գոցած է Տնտեսական Սորհուրդը⁴⁸:

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ— Իսկէնտէր Գարաճեանի ջանքերով Ուսումնարանը կ'ունենայ իր մնայուն եւ առանձին մանկապարտէզը, որ սկզբնական շրջանին չէ կրցած ունենալ որակաւոր ու որոշ փորձառութիւն ունեցող մանկապարտիզպանուհիներ: Ի. Գարաճեան ի'նք ուսուցչուհիին մանկավարժական դասեր կու տայ, կը ծրագրէ անոր աշխատանքը, կը վարժեցնէ ու կ'ապահովէ գործին յարատեւութիւնը⁴⁹:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ— Զգալապէս կ'աւելնայ աշակերտութեան թիւը. ասոր մէջ զգալի յաւելում մը կ'ընեն 1895-1896 թթ. ջարդերուն Հալէպ ապաստանած երկրացի ընտանիքներու փոքրիկները: Պանդուխտ ընտանիքներու պատճառով տարուէ տարի որոշ տեղաշարժի ենթարկուած է թիւը: 1915 թ. էն առաջ կը նշուի, որ Ուսումնարանը ունեցած է 400 - 700-ի միջեւ աշակերտ-աշակերտուհիներ⁵⁰: 1901 - 1902 տարեշրջանին Ուսումնարանը ունեցած է 687 աշակերտ եւ աշակերտուհի⁵¹: 1912 - 1913 տարեշրջանին պատկանող դպրոցական տոմարի մը համաձայն⁵² աղջկանց եւ մանչերու վարժարաններու ցանկի անցած Ա-Ե. կարգերու աշակերտութեան թիւն է 208 (101 մանչ, 107 աղջիկ). այստեղ նկատի չեն առնուած մանկապարտէզի, նախապատրաստականի երեք կարգերու եւ Զ. կարգի թիւերը: Բայց վերոյիշեալ ցանկին մէջ, ուր աշակերտները բերուած են իրենց մայր տոմարի արձանագրութեան թիւով, բարձրագոյն թիւը 526 է, ինչ որ ցոյց կու

48. [Անտորագիր], Հալէպի Կրթական Վերազարթնումը - Վարժարաններ, «Աուրիահայ Տարեցոյց», Բ. Տարի, 1925, էջ 315:

49. Վ. Ս., Հալէպի Ազգային Վարժարանը եւ Իսկէնտէր Գարաճեան, էջ 181:

50. [Անտորագիր], Հալէպի Կրթական Վերազարթնումը... էջ 315:

51. A. K. Sanjian, *The Armenian Communities in Syria Under Ottoman Dominion*, Cambridge, 1965, p. 90. Հմմտ. Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, II, 1901 - 1902, Պոլիս, 1902, տախտակ 27:

52. Տես՝ *Ներսէսեան Տոմար*: Ներսէսեան Ուսումնարանի 1912 - 1913 տարեշրջանի ամսվերջի ֆինուսիւններուն արդիւնքները եւ ուսուցիչներու տուած ամփոփ տեղեկագրերը ներկայացնող տոմար մը: Կ'ընգրկէ Ա-Ե. կարգերը միայն: Առաջին մասը յատկացուած է մանչերու վարժարանին, իսկ վերջին մասը՝ աղջկանց վարժարանին, որուն ուսուցիչներու տեղեկագրերը ներկայացնող կարգ մը էջերը կը պակսին: Միջին մասը յատկացուած է նախապատրաստականի երեք կարգերուն, բայց արձանագրութիւն չկայ: Արը մեր տրամադրութեան տակ դր. ա. Յար. Խորէն Փիլաւեան, Հալէպէն:

տայ, թէ նոյն տարեշրջանին Ուսումնարանը ունեցած է 526-էն աւելի աշակերտութիւն: Այսպէս, ինչպէս կ'երեւի, դպրոցը անհամեմատ աճ մը արձանագրած է 1880 թ.ի ընդամէնը 80 հոգինոց աշակերտութեան դիմաց: Ուսումնարանի բարեկարգութիւնը իրեն քաջած է ոչ միայն փողոց ու արհեստանոց իջած մանուկները, այլեւ շատերը քաղաքի օտար վարժարանները յաճախողներէն, այդպիսով կանխարգելով նորեկ բազմաթիւ ընտանիքներու փոքրիկներուն արաբախօսութիւնը, եւ որ աւելի կարեւոր է, արաբախօս բնիկներուն՝ հայերէնախօսութեան վարժեցուցած: 1906 թ.ին, Ա. Մ. Սեւեան կը գրէ. «7-8 տարի է ի վեր ազգային վարժարանները յաճախող նորելուկ արաբախօս պճլիկներն ո'չ միայն հայերէնը բաւական կը հասկնան ու կը խօսին, այլ թէ զաղափարային ռեւէ խնդիր մը աւելի վերջինով կրնան բացատրել քան առաջինով»⁵³:

ՏԵՍՈՒՉՆԵՐԸ— Նախապէս՝ Ներսէսեան Ուսումնարանի տեսչութիւնը, բացի երկու պարագայէ, կը վարէին հոգեւորականներ՝ քահանայ հայրեր, առաջնորդական տեղապահներ կամ առաջնորդներ. ասիկա կ'ըլլար պարզապէս անոր համար որ խնայուէր դուրսէն հրաւիրուելիք տեսուչի մը յատկացուելիք գումարը: Իրենց հիմնական աշխատանքը ունեցող կրօնաւորները մնայուն ու հետեւողական հսկողութեան տակ չէին կրնար պահել դպրոցը, ուր մնաց, որ շատ անգամ գործի անտեղեակ ծխական քահանաներ կրնային ըլլալ անոնք: Այս էր նաեւ գլխաւոր պատճառը այդ շրջանին Ուսումնարանին ուսումնական աննախանձելի վիճակին:

1890-ական թ.էն սկսեալ Ուսումնարանի տեսչութեան կը հրաւիրուին աշխարհականներ, ընդհանրապէս դրսեցի: Ասոնք թէեւ պաշտօնավարութեան կարճ շրջան մը կ'ունենան, առաւելագոյնը քանի մը տարի, ու կը հեռանան, բայց մեծապէս կ'օգնեն Ուսումնարանի ուսումնա-դաստիարակչական գործը հունի մէջ դնելու ճիգին: Անոնցմէ կը յիշուին հետեւեալները. Կարապետ Թուխմանեան, չմշկածագցի (1899 - 1900 թթ.), որ Հայոց Պատմութիւնը գաղտնօրէն կը դասաւանդէ: Կարապետ Պօտիկեան (1900 - 1901, 1903 - 1904 թթ.), Սարգիս Ամատեան (1901 - 1903 թթ.), Կ. Ապահունի, Ժիրայր Պասմաճեան (սա տեսչութենէն կը դադրի 1913 թ. Մարտի 19-ին, ըստ 1912 - 1913 տարեշրջանին վերաբերող տետրակի մը) եւ Աշխարհունի պաշտօնավարած են 1908 - 1914 թթ.: 1914 - 1915 տնօրէն չկայ, գործը կը վարէ Տնօրէն Խորհուրդ մը: Դպրոցը՝ պատերազմի պատճառով կը փակուի: 1919 թ.ի Սեպտ. 5-ին կը վերաբացուի. սկիզբը տնօրէն չկայ, Ուսուց-

53. Ա. Մ. Սեւեան, Հալէպի Գաղութին Անցեալն ու Ներկան, էջ 669:

չական Մարմին մը կը վարէ աշխատանքը, իսկ զարնան՝ տնօրէն կը նշանակուի Ֆրանկիւ Պագրըճեան⁵⁴:

Մանչերու վարժարանի տեսուչը վարած է Ոսումնարանի ընդհանուր տեսուչութիւնը: Աղջկանց վարժարանի տեսուչին եղած է անոր ներկայացուցիչը, ու հսկած իր բաժնին ներքին աշխատանքներուն միայն:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ— 1890-ական թուականներուն ուսուցչական կազմերու ամբողջական ցանկեր չեն պահուած, կը յիշուի Պերճ անունով սիրուած ուսուցիչ մը միայն⁵⁵: 1901 - 1902 տարեշրջանին Ուսումնարանը ունի 18 հոգինոց ուսուցչակազմ մը՝ 12 այր, 6 կին: 1903 - 1904 տարեշրջանին, տասնեակ տարիներու դադարէ մը ետք, կրկին պաշտօնավարութեան կը սկսի «վաստակաւոր ուսուցիչ» Կարապետ Կարիկեանը, որ աւանդած է հայերէն, ֆրանսերէն եւ այլ նիւթեր: Ուսուցիչ մնացած է մինչեւ վերջ⁵⁶: Շուրջ տասը տարի կրօն դասաւանդած է Յարութիւն Աւագ Քհն. Եսայեանը: 1912 - 1913 տարեշրջանին նախակրթարանի Ա-Ե. կարգերու ուսուցիչներ են՝ Կարապետ Կարիկեան, Կ. Ս. Միսիրեան, Գ. Մ. Ենովքեան, Ս. Սիրանոսեան, Ա. Տելերեան(?)՝ մանչերու վարժարան, տիկին Երանիկ Պասմաճեան, Ն. Կ. Կարիկեան, Ա. Նազարեան՝ աղջկանց վարժարան, ընդամէնը 9 հոգի: Հոս չեն նըշուած տնօրէնը եւ նախապատրաստականի ու մանկապարտէզի ուսուցիչները⁵⁷:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԿԱՄ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅ— 1880-ական թուականներէն ետք է միայն, որ Ուսումնարանը կամաց-կամաց կանոնաւոր ու յստակ ծրագիր մը իրագործելու կը միտի ու կը յաջողի միայն դարասկիզբին: Ասոր մէջ մեծ դեր կ'ունենան յատկապէս տեսուչները, որոնք ծանօթ ըլլալով Իզմիրի եւ Պոլսոյ հայոց բարեկարգ դպրոցներուն՝ կը փորձեն ծրագիրը հոս իրագործել: Ասկէ առաջ, ինչպէս վկայուած է, «վաթսունական եւ եօթանասունական թուականներուն, հայ մանուկներ ծալապատիկ խտրներու ու փոշեթաթաւ միմտէրներու վրայ նստած բազմիցս հեգեր են Սաղմոսն ու Նարեկը, ֆալախաներու սարսափին տակ լեղապատառ, գրաբար քերականութիւններով»⁵⁸:

1912 - 1913 տարեշրջանին վերաբերող վերոյիշեալ տոմարէն կարելի

54. [Անտորագիր], Հալէպի Կրթական Վերագարթնումը... , էջ 315:

55. Նոյնը, էջ 314:

56. A. K. Sanjian, *The Armenian Communities...*, pp. 90, 315.

57. Sbu՝ *Ներսէսեան Տոմար*:

58. [Անտորագիր], Հալէպի Կրթական Վերագարթնումը... , էջ 314:

է եզրակացնել, որ Ներսէսեան Ուսումնարանը մանկապարտէզէն զատ ունեցած է նախապատրաստական եւ նախակրթարան բաժիններ: Մանկապարտէզը եղած է երկսեռ, իսկ նախապատրաստականն ու նախակրթարանը՝ միասեռ, աղջկանց եւ մանչերու առանձին վարժարաններով: Նախապատրաստականը ունեցած է Ա, Բ, Գ, դասարաններ: Նախակրթարանը ունեցած է վեց դասարաններ՝ երեք բաժիններով, տարրական նախակրթարան՝ Ա. եւ Բ. դասարաններ, միջին նախակրթարան՝ Գ. եւ Դ. դասարաններ, քարճրագոյն նախակրթարան՝ Ե. եւ Զ. դասարաններ: Նախապատրաստականն ու նախակրթարանը միասնաբար ունեցած են 9 դասարաններ: Ուսման այս ծրագրով Ուսումնարանը լրիւ բարձրագոյն նախակրթարան է կամ միջնակարգ վարժարան, եւ ինչպէս ակնարկութենէ մը կ'երեւի, Մաարիֆէն (կրթական Նախարարութիւն) ճանչցուած իբրեւ Իտատիէ⁵⁹:

Ուսումնարանը՝ մեզի ծանօթ առաջին շրջանաւարտները կու տայ 1899 - 1900 տարեշրջանին, վեց հոգի միայն. Առաքել Գարածեան, Միքայէլ Մուրատեան, Ղազար Նարզակեան, Գրիգոր Թաղարեան, Մարգար Բալուլեան, Աստուածատուր Յովհաննէսեան: 1902 - 1903-ին՝ հինգ հոգի, Մինաս Պէրպէրեան, Մանուէլ Մարտիրոսեան, Հրանտ Տէօթէճեան, Սարգիս Սիրանոսեան եւ Էօթէն Քիրքեան: 1903 - 1904-ին՝ ինն շրջանաւարտներ. Աստուածատուր Տէթթէլեան, Գաբրիէլ Ճիրէչեան, Լեւոն Թիւֆէնկեան, Միհրան Աճէմեան, Արմէն Թօփճեան, Մարտիրոս Նաճարեան, Մեսրոպ Աճէմեան, Հրանտ Սէթեան եւ Մովսէս Էմիրխանեան: 1905 - 1906-ին երկու հոգի՝ Ա. Նազարէթեան, Յ. Քէրթմէնեան⁶⁰: Շրջանաւարտներու ուրիշ ցանկեր ու թիւեր չեն պահուած:

Դարասկիզբին՝ դպրոցը կ'ունենայ Շրջանաւարտաց Միութիւն, որ կը հիմնէ իր գրադարան-ընթերցարանը: Հալէպի այժմու կարգ մը գրադարաններու գիրքերէն կ'երեւի, որ ան ունէր հայերէն, ֆրանսերէն եւ անգլերէն (թերեւս թրքերէն ալ) ընտիր գիրքերու ճոխ հաւաքածոյ մը, կը ստանար «Մասիս», «Բիւզանդիոն», «Արեւելեան Մամուլ» եւ այլ թերթեր: Գրադարանի կնիքը կը կրէ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՆԵՐՍ. ՎԱՐԺՐԻ ՇՐՋԱՆԱԻԱՐՏԱՅ, Հալէպ, 1904» արձանագրութիւնը:

ԴԱՍԱՆԻԹԵՐ ԵՒ ԴԱՍԱԺԱՄԵՐ— Ըստ՝ 1912 - 1913 տարեշրջանի Ներսէսեան Տոմարին, նախապատրաստականի Ա. կարգը անցած է կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, հայերէն, թուարանութիւն,

59. Տաճար, Բ. տարի, թիւ 4, էջ 70:

60. [Անտորագիր], Հալէպի կրթական վերագործումը..., էջ 314-315:

պատմութիւն, գիր-գծագրութիւն, ընդամէնը վեց նիւթ: Բ. կարգը՝ ընդամէնը եօթը նիւթ, աւելցած է իրագիտութիւնը: Գ. կարգը՝ ութը նիւթ, աւելցած է աշխարհագրութիւնը: Դասագիրքեր, դասստամբրու քանակ եւ այլ մանրամասնութիւններ չկան:

Նախակրթարանի Ա-Ե. կարգերու դասանիւթերն ու դասստամբրը ներկայացուած են ստորեւ բերուած աղիւսակին մէջ (տես՝ էջ 262): Թիւերը կը նշեն շաբաթական դասստամբրը, գծիկը՝ նշուած դասանիւթը չունենալը, աստղանիշը՝ դասստամբրուն նշուած չըլլալը: Բազմաթիւ պարագաներ տուեալներ չունին, նոյնպէս Զ. դասարանը:

Մանչերու եւ աղջկանց վարժարանները լուրջ տարբերութիւններ ունին: Աղջկանց վարժարանը աւելի աղքատիկ ծրագիր ունի: Աւանդուող վեց լեզուներէն աղջկանց վարժարանին մէջ չկան գրաբարը, թրքերէնը, արաբերէնը, ինչպէս եւ միւս դասանիւթերէն՝ օսմանեան պատմութիւնը, քաղաքացիական կրթութիւնը, տոմարակալութիւնը, եւ այլն: Երկու վարժարաններուն՝ մէջ պարտադիր դասանիւթեր են թուաբանութիւն, երկրաչափութիւն, իրագիտութիւն, բնագիտութիւն, ազգային պատմութիւն, ընդհանուր պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն եւ այլն:

Երկու վարժարաններուն մէջ դասաւանդուող ընդհանուր նիւթերուն համար սահմանուած դասստամբրն ալ կը տարբերին երբեմն, միեւնոյն դասանիւթի ծրագիրն ալ: Այսպէս, Դ. կարգի աղջիկները հայերէնի ընթերցանութեան համար կը գործածեն «Գանձարանի Միջին Ընթացք»ը, իսկ մանչերը՝ «Բարձրագոյն Ընթացք»ը: Քերականութեան մէջ աղջիկները տարեվերջին հասած են Յովհ. Գազանճեանի քերականութեան 120-րդ էջը, իսկ մանչերը՝ 202-րդ:

Վերի օրինակները ցոյց կու տան, որ աղջկանց վարժարանի նկատմամբ պէտք եղած հոգատարութիւնն ալ կը պակսի: Համեմատելով ըսենք, որ նոյն 1912 - 1913 տարեշրջանին 101 աշակերտ ունեցող մանչերու վարժարանը (նկատի ունինք Ա-Ե. կարգերը) ունի 6 ուսուցիչ, իսկ 107 աշակերտուհի ունեցող աղջկանց վարժարանը՝ միայն երեք:

Կարգ մը դասեր երկու, եւ երբեմն երեք տարբեր դասարաններ անցած են նոյն դասագիրքով եւ միատեղ: Այսպէս՝ Դ. եւ Ե. կարգերը միասին անցած են անգլերէն, քաղաքացիական կրթութիւն եւ բարոյագիտութիւն, վերջին նիւթը՝ Ա. Բ. եւ Գ. դասարանները: Ասիկա տարուէ-տարի ծրագրային նոր պատշաճեցումներու հարկադրանք ստեղծած է:

Դասանիւթերը աւանդուած են հայերէն: Մանչերու վարժարանին մէջ թրքերէն լեզուով աւանդուող քանի մը դասանիւթ կայ միայն: Թրքերէնով են քաղաքացիական կրթութիւնն ու Ե. կարգի օսմ. պատմութիւնը միայն: Ե. կարգի բնագիտութիւնը շրջան մը աւանդուած է

Թրքերէն, ապա որոշուած է տալ հայերէնով: Ուսուցիչ Կ. Մխիթեանը արձանագրած է. «Այս դասը առաջ թրքերէն լեզուաւ կ'աւանդուէր, ապա որոշուած է տալ հայերէնով: Բայց փորձը ցուցուց թէ օգտակար չի կրցաւ ըլլալ, ուստի 12-3-1913 թուականէն սկսեալ հայերէն լեզուաւ աւանդելու սկսուած է»:

	Ա		Բ		Գ		Դ		Ե	
	մանչ.	աղջ.	մանչ.	աղջ.	մանչ.	աղջ.	մանչ.	աղջ.	մանչ.	աղջ.
Կրօնագիտութ.	*	*	*	*	*	*	*	*	*	*
Բարոյագիտութ.	2		2		1	2	1	1	1	1
Աշխ. հայերէն	5		5		5	5	4	5	2	5
Գրարար	—	—	—	—	—	—	—	—	2	—
Ֆրանս.	2		3		2	3	1	*	1	*
Օսմ.	*	—	3	—	3	—	4	—	4	—
Արար.	—	—	*	—	*	—	*	—	*	—
Անգլերէն	—	—	—	—	—	—	1	1	1	1
Թուարանթ.	4		4		3	3	3	3	3	3
Երկրաչափութ.	1		1		1	1	1	1	1	1
Իրագիտութիւն	2		2		2	2	—	—	—	—
Բնագիտ.	—	—	—	—	—	—	2	2	2	2
Ազգ. պատմ.	1		2		2	2	1	2	—	—
Օսմ. պատմ.	—	—	—	—	1	—	1	—	1	—
Շնորհ. պատմ.	—	—	—	—	—	—	—	—	2	2
Աշխ.	1		1		2	2	2	2	2	2
Քաղք. կրթ.	—	—	—	—	—	—	2	—	2	—
Տոմարակալութ.	—	—	—	—	—	—	—	—	1	—
Գիր.	3		3		3		—		—	
Գծագրութիւն	—		—		—		3		3	
Աւստին տնտես.	—		—		—	—	—	1	—	1
Ձեւ եւ կար	—		—		—	2	—	2	—	2
Ձեռագործ					—	6	—	6	—	6
Մարմնամարզ	*	*	*	*	*	*	*	*	*	*
Չինուար. մարզ.	*	—	*	—	*	—	*	—	*	—

Դասաւանդութիւնները հաճելի անցընելու փորձեր արձանագրուած են: Ուսուցիչները՝ պայմաններու ներած չափով, մանկավարժական արդի միջոցներու դիմած են նիւթի բացատրութիւններու ժամանակ, գործնական համատեղ աշխատանքներ տարած: Այսպէս, Դ. կարգի բնագիտութեան ուսուցիչ՝ Կ. Միսիրեան, աշակերտներուն սորվեցուցած է օճառ շինել, լուցկի շինել, «կազոզ» շինել, բուսաբանութեան դասանիւթին համար օգնած է ամէն աշակերտի կազմելու ծաղիկներու իր սեփական հարուստ հաւաքածոն, եւ այլն:

Դասացուցակին մէջ հիմնական բաժին ունին նաեւ մանչերու համար՝ մարմնամարզը, զինուորական մարզանքը, գծագրութիւնը, աղջիկներու համար՝ առտնին տնտեսութիւնը, ձեւ ու կարը, ձեռագործը: Աղջիկներն ալ մարմնամարզ ունեցած են: Ասոնց մասնակցած են բոլոր դասարանները միատեղ: Գնահատուած են նիշով, որ ոչ բոլոր դասարաններուն մէջ միջինին մէջ մտած է:

Մանչերու մարմնամարզը կ'ընդգրկէ շուէտական մարզանք, մարզական գործիքներու վրայ փորձեր ու մրցումներ: Ուսուցիչ Կ. Յ. Յովակիմեանը կը գրէ. «Ամբողջ տարին խաղացինք եւ բնաւ ազատ շանցուցինք, շատ անգամ ալ դպրոցէն դուրս խաղալու գացինք, որովհետեւ դպրոցնուս բակը կը ցաւիմ ըսելու թէ, շատ ճեղ ու անյարմար էր: Նախ որ, սալայատակուած է եւ տղայոց խաղալուն ուղղակի արգելք կ'ըլլայ, մասնաւորապէս տարւոյն վերջը ունեցանք հայ ողիմպիական խաղերու վրայ մարզանքի ընդհանուր փորձեր եւ մրցում մ'ալ: Այսպէս բաւական մը մարմիննիս զօրացուցինք»: Զինուորական մարզանքին աշակերտները սորված են քալելու, կանգնելու, բարեւելու եւ այլ ձեւեր, «պզտիկ հայ զինուորի մը» համար անհրաժեշտ շարժումներ ու գիտելիք:

Թերեւս հետաքրքրական ըլլայ մէջբերել ձեռագործի ուսուցչուհի Տիկին Երանիկ Պասմաճեանի սորվեցուցածներու ամփոփ պատկերը. «Մետաքսի գործ (մետաքսով աթլազի վրայ բանուած ծաղիկներ եւ նկարներ), պրոտէ (քթանի վրայ գոթոնով բանուածքներ), էթամինի գործեր (էթամին ըսուած նիւթին վրայ մետաքսով կամ սաթինով բանուած) ունէլէօ, ասեղնագործութիւն, քրոշէ կամ մախրազի գործ, ֆիլէ, ուլունքի գործ, Այնթապի ճերմակ գործ եւ այլն»:

Վարքը գնահատուած է նիշով, բայց միջինին մէջ նկատի չէ առնուած:

Դասաժամը եղած է 45 վայրկեան⁶¹: Քննութիւնները գնահատուած են

61. Տես՝ Դրան Հալէպի Հայոց: Հալէպի Առաջնորդարանի Դիւանէն անտիպ նիւթեր: Օգտուած ենք ուսուցիչ Կ. Կարիկեանէ հոգաբարձութեան յղուած 5/18 Մարտի, 1907

տասի վրայ: Աշակերտները խիստ քննութենէ անցած են ու ընդհանուր յաջողութիւնը եղած է կիսով: Այսպէս՝ 1912 - 1913 տարեշրջանի ամփոփումը քննութեան արդիւնքներով՝ մանչերու Դ. կարգի 15 աշակերտներէն 7-ը ձախող են, 4-ը՝ վերաքննելի, Գ. կարգի 17 աշակերտներէն՝ 6-ը ձախող, 4-ը վերաքննելի, Բ. կարգի 21 աշակերտներէն՝ 7-ը ձախող, 7-ը վերաքննելի: Այս պատճառով դասարաններու աշակերտները հետզհետէ դարձած են սակաւաթիւ, ձախող փոքրիկներուն դուրս մնալուն պատճառով: Դասընթացքները սկսած են Սեպտեմբերին, ու աւարտած՝ Մայիսի վերջին:

ԴԱՍԱԳԻՐՔ— Ներսէսեան Ուսումնարանի դասագիրքերը ընդհանրապէս ստացուած են Պոլիսէն եւ Չմիւռնիայէն՝ անհատներու, պատրիարքարանի, գիրքի գործակալութիւններու եւ կրթական ընկերութիւններու միջոցով: 1870 - 1880-ական թուականներուն հազուադիւր աշակերտներ սեփական գիրք ունենալու բախտ ունեցած են, ոչ թէ գիրքի չգոյութեան, այլ նիւթական պատճառներով: Ուսումնարանի վարիչները՝ հոգաբարձութիւններ եւ տեսուչներ, միջոցներ գտնելով, հետզհետէ կրցած են իւրաքանչիւր աշակերտի սեփական գիրք ունենալը պարտաւորիչ դարձնել:

Ուսումնարանի գործածած դասագիրքերու մասին հատ ու կտոր տեղեկութիւններ միայն հասած են: Այսպէս՝ 1906 - 1907 տարեշրջանին կը յիշուին Մինաս Մալեանի «Համառօտ Պատմութիւն Ընդհանուր Ազգաց» ձեռնարկը (Դ., Ե., Զ. կարգեր), Գ. Գաւաֆեանի «Թուարանութեան Բարձրագոյն» (Ե-Զ. կարգեր) եւ «Միջին» (Դ. կարգ) ընթացքները, Տիւզէնճեանի «Տոմարակալութիւն» (Զ. կարգ), Փրանսերէն Լեզուի համար Méthode Directe, I., (Գ. կարգ) եւ Syllabaire Regenbeau, (Բ. կարգ) դասագիրքերը⁶²: 1912 - 1913 տարեշրջանին կը յիշուին Գաւաֆեանի «Թուարանութիւն» եւ հայերէն «Գանձարան»ի միջին ու բարձրագոյն կարգերու դասագիրքերը, Յովհ. Գազանճեանի «Քերականութեան» տարրական ընթացքը, գրաբարի «Ի Գրոց Բարբառ»ը, Թէոդիկի «Բարոյախօսութիւն»ը, Ա. Յ. Պէզճեանի «Տարեգիրք Բնագիտութեան»ը (Դ. կարգ), Մամուրեանի «Առտնին Տեսնագիտութիւնը», Փրանսերէնի Choix de Lectures (Cours élémentaire) (Ե. կարգ), Choix de Lectures (Cours Préparatoire) (Գ. եւ Դ. կարգեր), Le Livre de Premier Age-ի Ա. եւ Բ. գիրքերը (Ա. եւ Բ. կարգեր), անգլերէնի The Royal School Primer (Դ-Ե. կարգեր) թրքերէնի «Ալթուն Քի-

բուակիր տեղեկագրէ մը, ուր կարգ մը դասարաններու ուսումնական վիճակը կը ներկայացուի:

62. Sbu' նոյնը:

թապ» Ա. տարի (Բ. կարգ) եւ Բ. (Գ. կարգ) եւ «Ենի Քրաաթ», Բ. տարի (Ա. կարգ) գիրքերը: Երկրաչափութեան համար Սալիհ Ջէքի պէ-
յին Րիւշտիյէի յատուկ համառօտ երկրաչափութեան թրքերէն դասա-
գիրքը: Կը յիշուի որ ազգային պատմութիւն աւանդուած է Բասմաճ-
եանի եւ Պօյաճեանի հետեւութեամբ, իսկ կար ու ձեւը՝ Գալէմքէրեանի
մեթոտով: Հաւանաբար ուսուցչի տրամադրութեան տակ դրուած ուղե-
ցոյց-գիրքեր են: Կարգ մը դասանիւթերու համար յարմար դասագիր-
քեր չեն եղած, կամ՝ եղածները չեն գոհացուցած ուսուցիչները:
Այսպէս՝ բնագիտութեան ուսուցիչ Կ. Միսիրեան բուսաբանութեան
համար անգլերէն դասագիրքէ մը թարգմանաբար կը կազմէ համառօտ
ձեռնարկ մը, որ հաւանաբար աշակերտները կ'ընդօրինակեն իրենց
սետրակներուն մէջ⁶³:

Եղեռնի տարիներուն Ներսէսեան Ուսումնարանը կը փակուի: Կը վե-
րաբացուի 1919 թ. Սեպտեմբերի 5-ին: Սկիզբը գործը կը վարէ Ուսուց-
չական Մարմին մը, 1920 թ.ի գարնան տեսչութիւնը կը յանձնուի Ֆը-
րանկիւլ Պագըրճեանի: Նոյն տարին սկսած էր գործել նաեւ Ճիտէյտէ
թաղի Հայկազեան վարժարանը: Յաջորդ տարեշրջանին, 1920 թ.ի վե-
րամուտին, երկու վարժարանները կը միանան: Միացեալ վարժարանը
կը ճանչցուի Հայկազեան անունով⁶⁴:

63. Տես՝ Ներսէսեան Տոմար:

64. [Անստորագիր], Հալէպի Կրթական Վերագործումը... , էջ 315:

**THE NATIONAL NERCESSIAN
SCHOOL OF ALEPPO**

HAGOP CHOLAKIAN

(Summary)

The history of the Armenian community of Aleppo goes back to the Middle Ages, while the first Armenian school was founded in the 16th century. During the middle decades of the 19th century, the community became enthusiastically interested in improving its educational facilities. Thus on February 21, 1876, the National Necessian School of Aleppo, comprising two different sections, one for boys and one for girls was founded. During the next decades, the school lived up to the aspirations of its founders, and benefited the Armenian community. But the school had to close its doors during the First World War because of the Turkish persecution of the Armenians. However, the school resumed its function in 1919. In the academic year of 1920-1921, the Necessian School was merged with the newly founded Haigazian School, another Armenian school in the city. The united school was named The National Haigazian School of Aleppo.

The article discusses the administrative problems of the Necessian National School, its educational policies, the academic curriculum, teachers with a long record of service, etc.